ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012Թ. ՀՈՒՆԻՍԻ 5-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին

ո ր ո շ ու մ է

Հաստատել համայնքի ավագանու օրակարգը

2. Համայնքի քառամյա զարգացման ծրագրի հաստատման մասին
3. Իջևան համայնքի տարածքում 2012թ տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին
4. Իջևանի քաղաքապետարանի աշխատակազմի և ենթակա բյուջետային հիմնարկների ու ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակների և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին
5. Հանրապետական, Եվրոպայի և Աշխարհի առաջնություններում մրցանակային տեղեր գրաված մարզիկներին և մարզիչներին դրամական միանվագ պարգևներ նշանակելու մասին
6. Իջևան համայնքի 2012թ բյուջեի տարեկան եկամուտների ու ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին
7. Քաունթերփարթ ինթրնեշնլի կողմից հայտարարված ՏԻՄ խրախուսման դրամաշնորհային ծրագրին մասնակցելու համար արտաբյուջետային հաշիվ բացելու մասին

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ բացակա

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ կողմ

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ կողմ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ կողմ

ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ բացակա

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ բացակա

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆ[illegible] ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012Թ. ՀՈՒՆԻՍԻ 5-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2-Ն

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի թիվ 53 հոդվածի ավարտվել են համայնքի 2012-2016թթ զարգացման քառամյա ծրագրի մշակման և քննարկումների աշխատանքները: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի թիվ 16 հոդվածի 1-ին կետով.

Համայնքի ավագանին

որոշում է`

1. Հաստատել համայնքի 2012-2016թթ զարգացման քառամյա ծրագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ բացակա

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ կողմ

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ կողմ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ կողմ

ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ բացակա

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ բացակա

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012Թ. ՀՈՒՆԻՍԻ 5-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 3-Ն

3. ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012Թ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների պահանջներով Իջևանի համայնքի ավագանին

ո ր ո շ ու մ է`

Հաստատել Իջևանի համայնքի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետա-շինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների /ներառյալ` ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է`

հիմնական օբյեկտների համար`

ա/ մինչև 300քմ մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում` այգեգործական /ամառանոցային տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար` 15000 դրամ:

բ/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար`

բա/ 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` 30000 դրամ:

բբ/ 501-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` 50000 դրամ:

բգ/ 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` 70000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար`

գ/ մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` 3000 դրամ:

դ/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` 5000 դրամ:

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված` շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով`

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների /այդ թվում` ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն` 3000 դրամ:

բ/ բացի օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում` ստորգետնյա/ հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության մասով.

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում `ստորգետնյա/ շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000դրամ:

4.Համայնքի տարածքում ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար` հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տեղական տուրքը սահմանվում է եռամսյակի համար 3000 դրամ:

5.Ծխախոտի արտադրանքի վաճառքը թույլտվության համար` հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տեղական տուրքը սահմանվում է եռամսյակի համար 3000 դրամ:

6. Համայնքի տարածքում

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է` յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ

բ/ հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի, մանրածախ առևտրի կետերում վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար 150000 դրամ

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրք սահմանվում է

ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 2000 դրամ

բ/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 3000 դրամ

գ/ այլ արտաքին գովազդի համար 1500 դրամ

դ/ դատարկ գովազդային վահանակների համար 700դրամ

8. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները, խաղատները/ ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է ա/ առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ, բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 50000 դրամ, գ/ բաղնիքների /սաունաների/ համար 200000 դրամ, դ/խաղատների կազմակերպման համար 600000 դրամ, ե/ շահումներով խաղերի կազմակերպման համար 350000 դրամ, զ/վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 դրամ:

9.Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10000 դրամ:

10.Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար ընթացիկ տարվա համար սահմանվում է 50000 դրամ:

11. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 2000 դրամ

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինարարության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկա-տնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 5000 դրամ:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց՝ 3000 դրամ փոխհատուցման վճար:

3. ա) Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար 15000դրամ:

բ) բնակելի ֆոնդի բնակվարձ և սեփականաշնորհված բնակարանների սպասարկման վարձ 1 քմ ընդհանուր մակերեսի համար՝ ամսական

- չսեփականաշնորհված բնակելի ֆոնդ՝ 15 դրամ
- սեփականաշնորհված բնակելի ֆոնդ՝ 10 դրամ:

գ) սեփականաշնորհված ոչ բնակելի տարածքների և այլ նպատակներով օգտագործվող բնակարանների ընդհանուր մակերեսի 1 քմ համար ամսական՝ 25 դրամ:

4.Բազմաբնակարան շենքերի համար պարտադիր իրականացման են ենթակա հետևյալ միջոցառումները և աշխատանքները՝

ա/ կենցաղային և կոշտ թափոնների հեռացում՝ առնվազն 3 օրը մեկ անգամ.

բ/ ընդհանուր օգտագործման տարածքների աղբամուղի ու աղբահավաք խցերի դեզինֆեկցիա /պայքար միջատների դեմ/ և դեռատիզացիայի /պայքար կրծողների դեմ/ իրականացում՝ առնվազն 3 ամիսը մեկ անգամ.

գ/ ընդհանուր օգտագործման և շենքի շինության սեփականատերերին սեփականության իրավունքով պատկանող տարածքների սանիտարական մաքրում՝ առնվազն 2 օրը մեկ անգամ

դ/ ծխաօդատար ուղիների մաքրում-կարգաբերում՝ առնվազն տարին մեկ անգամ.

ե/ վերանորոգման աշխատանքների իրականացում, որոնց չիրականացումը կարող է կյանքին, առողջությանը, անձանց գույքին, շրջակա միջավայրին:

Վերանորոգված աշխատանքների իրականացման ժամկետները որոշվում են շենքի ընդհանուր օգտագործման գույքի տեխնիկական վիճակի տեսողական զննման,անհրաժեշտության դեպքում՝ մասնագիտական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունների հիման վրա:

Ընդ որում, վթարային բնույթի այն վնասվածքներն ու անսարքությունները,որոնք կարող են ուղղակի վտանգ ներկայացնել, անհապաղ պետք է վերացվեն: Ուղղակի վտանգի փաստը պետք է հաստատվի տվյալ բնագավառում պետական լիազորված մարմնի կողմից.

զ/ բազմաբնակարան շենքերի տեխնիկական վիճակի ուսումնասիրությունները կատարվում են պարբերաբար, բայց ոչ ուշ, քան յուրաքանչյուր 10 տարին մեկ անգամ:

5. Բնակելի ֆոնդի շենքերի ոչ բնակելի տարածքների վարձավճարները սահմանել տարեկան 1 քմ ընդհանուր մակերեսի համար

ա) առևտրական կազմակերպություններ՝ 1200 դրամ

բ) հասարակական և արտադրական կազմակերպություններ՝ 1200 դրամ

գ) բյուջետային կազմակերպություններ` 840 դրամ

6.Համայնքի տարածքում մշտական կամ վարձակալությամբ հանձնված հողատարածքներում տեղադրված կրպակների կամ կառուցված շինությունների շրջակա տարածքներից աղբահանության համար ամսական վարձավճար սահմանել`

- մինչև 10քմ տարածք զբաղեցնողներից ամսական` 1000 դրամ
- 10 – 50 քմ` 2000 դրամ
- 50 քմ և ավելի` 3000 դրամ

7.ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետի համաձայն

ա/ «Իջևանի միջնակարգ երաժշտական դպրոց» ՓԲԸ և «Ավանդույթ» ՓԲԸ սովորողների ուսման վճար սահմանել ամսական

- 1-7 դասարանների համար ներառյալ 2000դրամ
- 8-10 դասարանների համար ներառյալ 5000դրամ

բ/ մանկապարտեզ հաճախող երեխաների սպասարկման վճար սահմանել ամսական 2000դրամ

գ/ Արվեստի դպրոց հաճախող սովորողների ուսման պարարվեստի բաժնի վճարը սահմանել ամսական 2000դրամ
գեղարվեստի բաժնի վճարը` 1500 դրամ

10.ա/ Բնակչությունից կենցաղային աղբի տեղափոխման վճար սահմանել`

- 1 շնչի հաշվով ամսական 80 դրամ

բ/ կազմակերպություններից աղբի տեղափոխման վճար սահմանել`

- 1 խմ համար 2000 դրամ

**2.1 Իջևան քաղաքի վարչական սահմաններում վարձակալությամբ օգտագործման տրամադրվող հողատարածքների վարձավճարներ սահմանելու մասին**

ՀՀ ,,Հողային օրենսգրքի" 76 հոդվածի համաձայն համայնքի վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքային սեփականությունը հանդիսացող հողամասերը վարձակալության են տրամադրում համայնքի ղեկավարները` մրցութային կարգով: Համաձայն ,,Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16 -րդ հոդվածի 20-րդ կետի, վարձակալության տրամադրվող վարձավճարի չափերը և պայմանները հաստատում է համայնքի ավագանին: Համայնքի ավագանին

ո ր ո շ ու մ է`

1. Համայնքի վարչական սահմաններում վարձակալությամբ օգտագործման տրամադրվող հողատարածքների մեկնարկային տարեկան վարձավճար սահմանել 1 քմ մակերեսի համար 15 դրամի չափով II գոտում, 20 դրամի չափով I գոտում:

**2.2 Իջևանի քաղաքապետարանի հաշվեկշռում գտնվող տարածքների աճուրդային վաճառքի մեկնարկային գին սահմանելու մասին**

ՀՀ ,,Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի համաձայն Իջևանի քաղաքապետարանի հաշվեկշռում գտնվող տարածքներին աճուրդային վաճառք կազմակերպելու համար անհրաժեշտ է սահմանել մեկնարկային գին, որի համար համայնքի ավագանին

ո ր ո շ ու մ է

1.Ոչ բնակելի մակերեսների աճուրդային վաճառքի մեկնարկային գին հաստատել 1 քմ ընդհանուր մակերեսի համար 10000 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ բացակա

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ կողմ

ՀՈՎԻԿ ԽԵՑՅԱՆ կողմ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ բացակա

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ բացակա

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012Թ. ՀՈՒՆԻՍԻ 5-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 4-Ն

## 4. ԻՋԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԵՆԹԱԿԱ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՈՒ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ համաձայն,,Տեղական ինքնակառավարման մասին"ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի և առաջնորդվելով քաղաքապետարանի կանոնադրությամբ համայնքի ղեկավարը ավագանու հավանությանն է ներկայացնում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը և հաստատմանը՝ քաղաքապետարանի և ենթակա բյուջետային հիմնարկների ու ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները և պաշտոնակյին դրույքաչափերը:

Հաշվի առնելով քննարկման արդյունքները, համայնքի ավագանին

ո ր ո շ ու մ է

1.Տալ հավանություն քաղաքապետի առաջարկությանը հաստատել քաղաքապետարանի և ենթակա բյուջետային հիմնարկների ու ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները ու պաշտոնային դրույքաչափերը /կցվում են հավելված 1 և 2/:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ բացակա

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ կողմ

ՀՈՎԻԿ ԽԵՑՅԱՆ կողմ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ կողմ

ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ բացակա

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ բացակա

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

Հավելված 1

# ԻՋԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Աշխատակազմը կազմված է 3 բաժիններից

**Առանձնացված ստորաբաժանում**

1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Իջևանի տարածքային բաժին

**Կառուցվածքային ստորաբաժանումներ**

2. Ֆինանսական բաժին

3. Տարածքային զարգացման և քաղաքաշինության բաժին

Հավելված 2

**ԻՋԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ**

Աշխատակիցների թվաքանակը՝ 44

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| | ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ | | |
| 1. | Համայնքի ղեկավար | 1 | 250000 |
| | ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 200000 |
| 4 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 160000 |
| | ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| 5 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 180000 |
| | *Աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում* | | |
| | *ՔԿԱԳ Իջևանի տարածքային բաժին* | | |
| 6 | Բաժնի պետ | 1 | 147000 |
| 7 | 1-ին կարգի մասնագետ | 2 | 54000 |
| | *Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներ* | | |
| | *Ֆինանսական բաժին* | | |
| 8 | Բաժնի պետ | 1 | 147000 |
| 9 | Գլխավոր մասնագետ | 1 | 128000 |
| 10 | Առաջատար մասնագետ | 1 | 100000 |
| 11 | 1-ին կարգի մասնագետ | 2 | 80000 |
| | *Տարածքային զարգացման և քաղաքաշինության բաժին* | | |
| 12 | Բաժնի պետ | 1 | 147000 |
| 13 | Գլխավոր մասնագետ –ճարտարապետ | 1 | 128000 |
| 14 | Առաջատար մասնագետ | 2 | 100000 |
| 15 | 1-ին կարգի մասնագետ | 1 | 80000 |
| | *Աշխատակազմի մասնագետներ* | | |
| 16 | Գլխավոր մասնագետ | 5 | 128000 |
| 17 | Առաջատար մասնագետ | 4 | 100000 |
| 18 | 1-ին կարգի մասնագետ | 4 | 80000 |
| 19 | 2-րդ կարգի մասնագետ | 7 | 65000 |
| | ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐ | | |
| 20 | Քարտուղարուհի | 1 | 65000 |
| 21 | Խմբագիր | 1 | 77000 |
| | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| 23 | Վարորդ | 1 | 65000 |
| 24 | Պարետ | 1 | 55000 |
| 25 | Էլեկտրիկ | 1 | 41000 |
| 26 | Հավաքարար | 1 | 51000 |
| 27 | Ավտոբուսի վարորդ | 1 | 38000 |
| | Ընդամենը | 44 | |

### ԻՋԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ԳԱՅԱՆԵ» ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Դրույքը | Ամսեկան դրույքաչափը |
|---|---|---|---|
| 1. | Վերելակների ավագ տեխնիկ | 1 | 67000 |
| 2. | Տեխնիկ | 1 | 39000 |
| 3. | Գործավար | 1 | 38000 |

### ԻՋԵՎԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Դրույքը | Ամսեկան դրույքաչափը |
|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 67000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 51000 |
| 3 | Լաբորատոր | 1 | 40000 |
| 4 | Դասատու | 7 | 39000 |
| 5 | Հավաքարար | 2 | 38000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 12 | X |

### «ԻՋԵՎԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՓԲԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Դրույքը | Ամսեկան դրույքաչափը |
|---|---|---|---|
| 1. | Տնօրեն | 1 | 75000 |
| 2. | Կազմ. բաժին | 1 | 50000 |
| 3. | Դասատու | 4 | 43700 |
| 4. | Դասատու | 27 | 40300 |
| 5. | Դասատու | 4 | 38000 |
| 6. | Հաշվապահ | 1 | 45000 |
| 7. | Գանձապահ | 1 | 38000 |
| 8. | Գրադարանավար | 1 | 38000 |
| 9. | Հավաքարար | 3 | 38000 |
| 10. | Հնոցապան | 1 | 38000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 44 | X |

### ԻՋԵՎԱՆԻ «ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԻՄՆԱՐԿԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Դրույքը | Ամսեկան դրույքաչափը |
|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 94000 |
| 2 | Փոխտնօրեն | 1 | 47000 |
| 3 | Ինժեներ | 1 | 70000 |
| 4 | Հաշվապահ | 1 | 65000 |
| 5 | Կադրերի բաժնի տեսուչ | 1 | 47000 |
| 6 | Աբոնենտական բաժնի վարիչ | 1 | 60000 |
| 7 | Բանվոր | 3 | 43000 |
| 8 | Վարորդ | 3 | 51000 |
| 9 | Սանմաքրման հսկիչ | 1 | 41000 |
| 10 | Զուգարանի հավաքարար | 1 | 47000 |
| 11 | Փողոցի հավաքող | 23 | 51000 |
| 12 | Հսկիչ-հավաքարար | 4 | 76000 |
| 13 | Բանվորներ | 10 | 51000 |
| 14 | Աղբանոցի պահակ | 1 | 38000 |
| 15 | Այգու պահակ | 2 | 38000 |
| 16 | Հատուկ մեքենայի վարորդ | 2 | 94000 |
| 17 | Ամբարձիչի վարորդ | 1 | 39000 |
| 18 | Գերեզմանոցի պահակ | 4 | 38000 |
| 19 | Փողոցային լուսավորության | 1 | 59000 |

| | | | |
|---|---|---|---|
| | hսկիչ-էլեկտրիկ | | |
| 20 | Շենքի պահակ | 2 | 51000 |
| 21 | Շենք հավաքարար | 2 | 50000 |
| 22 | Ավտոաշտարակի վարորդ | 1 | 39000 |
| 23 | Վարպետ-փականագործ | 1 | 66000 |
| 24 | Մասնագետ | 2 | 39000 |
| 25 | Ավ.մասնագետ | 1 | 40000 |
| 26 | Իրավաբան | 1 | 58000 |
| 27 | Պահակ զարաժի | 1 | 41000 |
| 28 | Պահակ | 1 | 38000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 74 | X |

ԻՋԵՎԱՆԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Դրույքը | Ամսեկան դրույքաչափը |
|---|---|---|---|
| 1. | Տնօրեն | 1 | 60000 |
| 2. | Հաշվապահ | 1 | 40000 |
| 3. | Մասնագետ /ֆրանսերեն/ | 1 | 38000 |
| 4. | Հոգեբան | 1 | 40000 |
| 5. | Դաստիարակ | 5 | 40000 |
| 6. | Երաժշ. դաստ. | 1 | 38000 |
| 7. | Բուժքույր | 1 | 38000 |
| 8. | Դաստ. օգ. | 5 | 38000 |
| 9. | Խոհարար | 1 | 38000 |
| 10. | Բակապահ | 1 | 38000 |
| 11. | Տնտեսվար | 1 | 38000 |
| 12. | Պահակ | 1 | 38000 |
| | Ընդամենը | 20 | X |

ԻՋԵՎԱՆԻ ԹԻՎ 5 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Դրույքը | Ամսեկան դրույքաչափը |
|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 60000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 40000 |
| 3 | Դաստիարակ | 3 | 40000 |
| 4 | Երաժշ. դաստ. | 0.5 | 38000 |
| 5 | Բուժքույր | 0.5 | 38000 |
| 6 | Դաստ. օգ. | 3 | 38000 |
| 7 | Խոհարար | 1 | 38000 |
| 8 | Բակապահ | 1 | 38000 |
| 9 | Պահակ | 1 | 38000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 13 | X |

ԻՋԵՎԱՆԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Դրույքը | Ամսեկան դրույքաչափը |
|---|---|---|---|
| 1. | Տնօրեն | 1 | 67000 |
| 2 | Փոխ.տնօրեն | 1 | 39000 |
| 3 | Հաշվապահ | 1 | 42000 |
| 4 | Քարտուղարուհի | 1 | 38000 |
| 5 | Հնոցապան տնտեսվար | 1.5 | 57000 |
| 6 | Հնոցապան | 2 | 38000 |
| 7 | Հավաքարար | 3 | 38000 |
| 8 | Մարզիչներ | 9 | 38000 |
| 9 | Հանդերձապահ | 1 | 38000 |
| 10 | Պահակ | 1 | 38000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 21.5 | X |

ԻՋԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը | Դրույքը | Ամսեկան Դրույքաչափը |
|---|---|---|---|
| 1. | Տնօրեն | 1 | 67000 |
| 2. | Հաշվապահ | 1 | 39000 |
| 3. | Մեթոդիստ | 2 | 38000 |
| 4. | Տնտեսվար | 1 | 50000 |
| 5. | Ռեժիսոր | 1 | 48000 |
| 6. | Գեղմասվար | 1 | 48000 |
| 7. | Օպերատոր | 1 | 42000 |
| 8. | Գրադարանավար | 1 | 38000 |
| 9. | Հսկիչ | 1 | 38000 |
| 10. | Նկարիչ | 1 | 38000 |
| 11. | Հավաքարար | 2 | 39000 |
| 12. | Պահակ | 2 | 38000 |
| | Ընդամենը | 15 | X |

ԻՋԵՎԱՆԻ ՊԱՏՄԱԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Դրույքը | Ամսեկան դրույքաչափը |
|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 60000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 38000 |
| 3 | Գիտ. աշխատող | 1 | 38000 |
| 4 | Մասնագետ | 1 | 38000 |
| 5 | Մասնագետ | 1 | 38000 |
| 6 | Հավաքարար | 1 | 38000 |
| 7 | Պահակ | 1 | 38000 |
| | Ընդամենը | 7 | X |

ԻՋԵՎԱՆԻ «ՎԵՐՆԱՏՈՒՆ» ՓԲԸ-Ի ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Դրույքը | Ամսեկան դրույքաչափը |
|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 60000 |
| 3 | Հաշվապահ | 1 | 39000 |
| 4 | Գլխ. մասնագետ | 1 | 40000 |
| 5 | Մասնագետ | 1 | 39000 |
| 6 | Մասնագետ | 1 | 38000 |
| 7 | Տնտեսվար | 1 | 38000 |
| 8 | Հավաքարար | 2 | 38000 |
| 9 | Պահակ | 1 | 38000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 9 | X |

ԻՋԵՎԱՆԻ «ԱՎԱՆԴՈՒՅԹ» ՓԲԸ-Ի ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Դրույքը | Ամսեկան դրույքաչափը |
|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 67000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 44000 |
| 3 | Գլխ. մասնագետ | 2 | 46000 |
| 4 | Մասնագետ | 5 | 39000 |
| 5 | Մասնագետ | 1 | 41000 |
| 6 | Հոգեբան | 1 | 42000 |
| 7 | Հավաքարար | 2 | 38000 |
| 8 | Տնտեսվար | 1 | 38000 |
| 9 | Ռեժիսոր | 1 | 38000 |
| 10 | Պահակ | 2 | 38000 |
| 11 | Բակապահ | 1 | 38000 |
| 12 | ժող գործիք. Մասնագետ | 1 | 38000 |
| 13 | Երաժշտության դասատու | 12 | 40000 |
| 14 | Գրադարանավար | 1 | 39000 |
| 15 | Գրադարանավար | 1 | 38000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 33 | X |

## ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012Թ. ՀՈՒՆԻՍԻ 5-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

### ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 5-Ն

5. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ, ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ՏԵՂԵՐ ԳՐԱՎԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԶԻՉՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻԱՆՎԱԳ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևան քաղաքը հարուստ է մարզական ավանդույթներով, ունեցել է բազմաթիվ մրցանակակիրներ և այսօր քաղաքի տարբեր մարզական խմբակներում ընդգրկված են շնորհաշատ և մարզական լուրջ ձեռքբերումների ընդունակ երեխաներ: Սպորտային ավանդույթները արմատավորելու, ՀՀ, Եվրոպայի և աշխարհի առաջնություններում մրցանակային տեղեր գրաված մարզիկներին խրախուսելու նպատակով համայնքի ավագանին նպատակահարմար է գտնում սահմանել միանվագ դրամական պարգևներ:

Հաշվի առնելով վերոհիշյալը և քաղաքապետի առաջարկությունը, համայնքի ավագանին

որոշում է

1.Տալ հավանություն քաղաքապետի առաջարկությանը ՀՀ, Եվրոպայի և աշխարհի առաջնություններում մրցանակային տեղեր գրաված մարզիկների համար սահմանելու հետևյալ միանվագ դրամական պարգևները.

| Մրցանակային տեղեր | ՀՀ առաջնություն և միջազգային պաշտոնական մրցաշարեր | Եվրոպայի առաջնություն | | Աշխարհի առաջնություն | |
|---|---|---|---|---|---|
| | մրցանակային տեղ գրավելու համար | մրցանակային տեղ գրավելու համար | մասնակցության համար | մրցանակային տեղ գրավելու համար | մասնակցության համար |
| ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ | | | | | |
| III | 10 հազար դր. | 20 հազար դր. | 20 հազար դր. | 30 հազար դր. | 30 հազար դր. |
| II | 20 հազար դր. | 30 հազար դր. | | 40 հազար դր. | |
| I | 30 հազար դր. | 40 հազար դր. | | 50 հազար դր. | |
| ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ | | | | | |
| III | 20 հազար դր. | 30 հազար դր. | 30 հազար դր. | 40 հազար դր. | 40 հազար դր. |
| II | 30 հազար դր. | 40 հազար դր. | | 50 հազար դր. | |
| I | 40 հազար դր. | 50 հազար դր. | | 60 հազար դր. | |
| ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ | | | | | |
| III | 30 հազար դր. | 40 հազար դր. | 40 հազար դր. | 50 հազար դր. | 50 հազար դր. |
| II | 40 հազար դր. | 50 հազար դր. | | 60 հազար դր. | |
| I | 50 հազար դր. | 70 հազար դր. | | 80 հազար դր. | |

2.ՀՀ Եվրոպայի և աշխարհի երիտասարդների առաջնություններում մրցանակային տեղեր գրաված մարզիկների մարզիչների համար սահմանել դրամական պարգև համապատասխան մրցանակային տեղ գրաված մարզիկի գումարի 40% չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ բացակա

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ կողմ

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ կողմ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ կողմ

ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ բացակա

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ բացակա

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

## ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012Թ. ՀՈՒՆԻՍԻ 5-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

### ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 6-Ն

6. ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՈՒ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իջևանի համայնքի ավագանին նշում է,որ համաձայն ,,Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի, համայնքի ղեկավարը ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի բյուջեի նախագիծը: Հաշվի առնելով քաղաքապետի կողմից 2012թ. քաղաքի բյուջեի նախագծի քննարկման արդյունքները, համայնքի ավագանին

ո ր ո շ ու մ է՝

1. Հաստատել քաղաքապետի կողմից ներկայացված 2012թ. տարեկան բյուջեի նախագիծը 313034.8 հազար դրամ եկամուտների և 314311.7 հազար դրամ ծախսերի գծով, բյուջեի դիֆիցիտը 1276.9 հազար դրամ /հավելված 1 և 2/:

Բյուջեի դիֆիցիտի ծածկմանն ուղղել տարեսկզբի 1276.9 հազար դրամ ազատ մնացորդը:Թույլատրել քաղաքապետին 2012թ բյուջեի մինչև 15% սահմաններում կատարելու հոդվածային փոփոխություններ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ բացակա

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ կողմ

ՀՈՎԻԿ ԽԵՑՅԱՆ կողմ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ կողմ

ԱՋԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ բացակա

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ բացակա

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

*Հավելված թիվ 1*

# ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2012թ. ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

| ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿ | Ընդամենը |
|---|---|
| *1 Հարկեր ընդ.* | 28300 |
| այդ թվում I հողի հարկ | 2300 |
| II գույքահարկ ընդ. | 26000 |
| այդ թվում ա/.ֆիզ. անձ | 20000 |
| բ/ իրավ. անձ | 6000 |
| *2 Տուրքեր ընդամենը* | 13404 |
| այդ թվում I Պետ.տուրք | 5100 |
| որից ա/ ՔԿԱԳ | 2300 |
| բ/ ՆՈՏԱՐ | 2800 |
| II Տեղական տուրք | 8304 |
| որից I շին. թույլտվ. | 1100 |
| II շին այլ աշխ. | 114 |
| III օբյեկտի քանդ. թույլտ | 25 |
| IV ոգ.խմիչք վաճ.թույլտվություն | 984 |
| V ծխախոտ վաճ.թույլտվություն | 540 |
| VI թանկարժեք մետաղ. վաճառք | 300 |
| VII վառելիքաքսայուղերի վաճառք | 1500 |
| VIII բացօթյա առևտրի թույլտ.տուրք | 301 |
| IX մարդ. տաքսու թույլտվ. | 400 |
| X արխիվից օգտ.տուրք | 40 |
| X I այլ արտ. գովազդի տուրք | 3000 |
| *3 Վարձակալական վճարներ, ընդ՝* | 2150 |
| այդ թվում՝ I ոչ բնակ. մակ. վարձ | 150 |
| II հողի վարձ.վճար | 2000 |
| 4. Այլ տեղական վճարներ ընդ. | 13665 |
| այդ թվում՝ I շի. առաջ. և հողի չափագրումներ | 515 |
| II մրցույթ և աճուրդի մասն վճար | 2550 |
| III աղբահանության վճար | 10000 |
| IVայլ վճարներ | 600 |
| 5.Սույժ և տուգանք | 1000 |
| 6.Ընդամենը սեփ. եկ. | 58519 |
| 7.ՔԳԱԿ /ՋԱԳՍ/ պահպանման ֆին, | 3350 |
| 9.Դոտացիա ընդամենը | 250104.9 |
| 10.Սուբվենցիա | 1060.9 |
| 11.Ընդամենը եկամուտներ | 313034.8 |
| *12.Համայնքի գույքի օտ.* | 20000 |
| 13.Տարեսկզբի մնացորդ | 1637.3 |

ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2012թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

| | Ընդամենը | Աշխատա-վարձ | Սոց.վճար | Էլ.փող լուսավոր | Կապ | գործ-ում | Տեղեկատվ և մաս գար ծախս | Ներկ ծախսեր | Ընդհ. Բնույթի | մեջ նոր | Գրա նյութեր | Սեփական տր. | Կենցաղ. և այլ նյութեր | Գյուղ. Տնտ. | Աշակ միջ | վարձ ծախս | Ջրմ կոյ | Կաղապար | Պարտադիր վճ./ապպա/ | սոց.օգ | Պարտադիր վճ. | Կապ ծախս | Սննդամթերք | Անդամ.վճար | Բարե.կարգ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Քաղաքապետարան | 78779,0 | 49044 | 8514 | 2700 | 1857 | 150 | 639 | 1200 | 240 | 650 | 800 | 4200 | 7550 | 800 | | | | | 170 | | | | | 265 | |
| Կոմունալ տնտ. | 79699,0 | 47639 | 10522 | | 58 | | 100 | | 700 | 450 | 200 | 16800,0 | 2100 | 300 | | | | | 230 | | 600 | | | | |
| ՔԿԱԳ | 4367,0 | 3315 | 593 | 50 | 58 | 20 | | | | | 60 | | | | | 271 | | | | | | | | | |
| Ընդամենը | 162845,0 | 99998,0 | 19629,0 | 2750,0 | 1973,0 | 170,0 | 739,0 | 1200,0 | 940,0 | 1100,0 | 1060,0 | 21000,0 | 9650,0 | 1100,0 | 0,0 | 271,0 | 0,0 | 0,0 | 400,0 | 0,0 | 600,0 | 0,0 | 0,0 | 265,0 | 0,0 |
| Թիվ 1մ/մ | 127130,0 | 9552 | 2393 | 200 | 58 | | 30 | | 100 | | 60 | | | | 50 | | | | | | | | 270 | | |
| Թիվ 5մ/մ | 7884,0 | 5832 | 1502 | 100 | | | 30 | | 100 | | 50 | | | | 50 | | | | | | | | 220 | | |
| Արվեստի դպրոց | 7018,0 | 5640 | 1188 | | | | 40 | | 100 | | | | | | 50 | | | | | | | | | | |
| Մարզադպրոց | 15888,0 | 11493 | 2732 | 180 | | 743 | 50 | 200 | 100 | | 90 | | | | 300 | | | | | | | | | | |
| «Երաժշտական դպրոց»ՓԲԸ | 38731,0 | 31930 | 6401 | | | 100 | 50 | | 100 | | | | | | 150 | | | | | | | | | | |
| «Ավանդույթ» ՓԲԸ | 27151,0 | 20955 | 4036 | | | 150 | 50 | | 100 | | | | | | 1500 | | | | | | 360 | | | | |
| [illegible] | [illegible] | [illegible] | 18252,0 | 480,0 | 58,0 | 993,0 | 250,0 | 200,0 | 600,0 | 0,0 | 200,0 | 0,0 | 0,0 | 0,0 | [illegible] | [illegible] | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 360,0 | 0,0 | 490,0 | 0,0 | 0,0 |
| Մշակույթի տուն | 9985,0 | 7656 | 1869 | 130 | | | 30 | | 100 | | 50 | | | | 150 | | | | | | | | | | |
| Թանգարան | 4540,0 | 3456 | 854 | 30 | | | 10 | | 100 | | 40 | | | | 50 | | | | | | | | | | |
| «Վերնատուն» ՓԲԸ | 5720,0 | 4416 | 1094 | 80 | | | | | 100 | | 30 | | | | | | | | | | | | | | |
| Ընդամենը մշակույթ | 20245,0 | 15528,0 | 3817,0 | 240,0 | 0,0 | 0,0 | 40,0 | 0,0 | 300,0 | 0,0 | 120,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 200,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| «Գայանե» համ | 3264,0 | 1728,0 | 336,0 | | | | | | | | | | 1200,0 | | | | | | | | | | | | |
| Սոց ոլորտ | 2500,0 | | | | | | | | | | | | | | | | | | | 2500,0 | | | | | |
| Ջրմուղ կոյուղու ծախս | 1924,0 | | | | | | | | | | | | | | | | 1924,0 | | | | | | | | |
| փողոց լույս | 5100,0 | | | 5100,0 | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| բարեկարգում | 1100,0 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | 1100 |
| Մասսայական միջոցառումներ | 4500,0 | | | | | | | | | | | | | | 4500 | | | | | | | | | | |
| Կաղապար | 1300,0 | | | | | | | | | | | | | | | | | 1300,0 | | | | | | | |
| Չափագրումների ծախս | 1087,8 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Ընդ. վարչ. բյուջե | 313250,8 | 202656,0 | 42034,0 | 8570,0 | 2031,0 | 1163,0 | 1029,0 | 1400,0 | 1840,0 | 1100,0 | 1380,0 | 21000,0 | 10850,0 | 1100,0 | 6800,0 | 271,0 | 1924,0 | 1300,0 | 400,0 | 2500,0 | 960,0 | 0,0 | 490,0 | 265,0 | 1100,0 |
| Ֆոնդ. բյուջե | 21421,3 | | | | | | | | | | | | | | | | | | | | | 21421,3 | | | |
| Ընդամենը բյուջե | [illegible] | [illegible] | 42034,0 | 8570,0 | 2031,0 | 1163,0 | 1029,0 | 1400,0 | 1840,0 | [illegible] | 1380,0 | 21000,0 | 10850,0 | 1100,0 | 6800,0 | 271,0 | 1924,0 | 1300,0 | 400,0 | 2500,0 | 960,0 | 21421,3 | 490,0 | 265,0 | 1100,0 |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012Թ. ՀՈՒՆԻՍԻ 5-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 7

7. ՔԱՈՒՆԹԵՐՓԱՐԹ ԻՆԹՐՆԵՇՆԼԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՏԻՄ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իջևանի համայնքի ավագանին նշում է,որ Իջևանի համայնքը համագործակցության հուշագիր է ստորագրել Քաունթերփարթ ինթրնեշնլ կազմակերպության հետ: Նախատեսված է համայնքում իրականացնել համատեղ ծրագիր՝ տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիական հասարակության ամրապնդմանն ու համագործակցությանը նպաստելու նպատակով:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտություն է առաջացել բացել արտաբյուջետային հաշիվ: Հաշվի առնելով քաղաքապետի առաջարկությունը և ղեկավարվելով << ՏԻՄ օրենքի 66-րդ հոդվածով, համայնքի ավագանին

ո ր ո շ ու մ է՝

1. Տալ հավանություն քաղաքապետի առաջարկությանը՝ Իջևանի տեղական գանձապետական բաժանմունքում բացել արտաբյուջետային հաշիվ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ բացակա

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ կողմ

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ կողմ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ կողմ

ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ բացակա

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ բացակա

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ